

ԹԻԼ 24265  
Փետր. 20, 1974

Հոգեշնորհ  
Տ. Շնորհք վրդ. Գասպարեան  
Հովիւ Ս. Փրկիչ Հայց. Եկեղեցւոյ  
Նախագահ Ժիական Խորհուրդի  
Ուսար.

Սիրելի Հայր Շնորհք,

Ստացած ենք Ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ Ձեր նախագահութեամբ Յունուար 27ին զուարուած համայնքիդ ծիական ժողովին մէջ կատարուած է ծիական Խորհուրդի վեց անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով ըուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ծիական ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք ծիական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել ծիական Խորհուրդի նորընտիր Դիւանի անդամոց անունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Օրհնելով ծիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Դաւիթ Ատիշեան  
Գառնիկ Ալեքսանտրեան  
Ն. Ճան Քապեան  
Օր. Մերի Մանուկեան  
Փիթըր Նալպանտեան  
Տիկ. Ալիս Եարըմեան